ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**

**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**


**Հաշվետվություն թիվ 105, 23.10.2015թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,277,501 հատ, | 40,000 հատ | 160.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 23.10.15 |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 23.10.15 |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 23.10.15 |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 2 |
| **Բագրատ Ճզմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 23.10.15 |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 23.10.15 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 23.10.15 |

23 հոկտեմբերի 2015 թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության արժեկտրոնային պարտատոմսերը ապացուցակելու և առևտուրը պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում դադարեցնելու մասին “ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ” բաց բաժնետիրական ընկերության Գլխավոր տնօրենի 2015 թվականի հոկտեմբերի 20 թիվ ՑՊ-012-10/15 որոշում (“ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ” բաց բաժնետիրական ընկերության Գլխավոր տնօրենի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

NASDAQ OMX

# ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

**20 հոկտեմբերի 2015 թվականի N ՑՊ-012-10/15**

***ք. Երևան***

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԱՊԱՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 21-րդ գլխի 107 կետի 5) ենթակետի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 9% եկամտաբերությամբ, 40,000 (քառասուն հազար) հատ անվանական պարտատոմսերը (ARBKB5) շրջանառության ժամկետը լրանալու հանգամանքը և Օպերատորի «Բորսայական ծառայությունների դեպարտամենտի» կողմից 2015 թվականի հոկտեմբերի 19-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 107 կետի 5) ենթակետի և Օպերատորի Կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 9% եկամտաբերությամբ, 40,000 (քառասուն հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց շնորհվել է AMARBKB25ER8 ծածկագիրը և ARBKB5 հապավումը, ապացուցակել և առևտուրը դադարեցնել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև դադարեցնել դրանցով հասցեական և ռեպո գործարքներ կնքելու թույլտվությունը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և 1 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին Առևտրային համակարգի միջոցով տեղեկացնել Շուկայի մասնակիցներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ